

**ԸՆԹԵՐԳԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ**

**Բանալի բառեր՝** գրադարան, գրադարանավարներ, համաշխարհային մարտահրավերներ, համագործակցություն, նոր գաղափարներ, պատգամ:

**Keywords:** library, librarians, global challenges, cooperation, new ideas, message.

Մեծ է ընթերցանության կարևորությունը, նրա դերն ու նշանակությունը ժողովուրդների, ազգերի, հասարակությունների զարգացման մեջ: *Ընթերցանության խթանմանը և գրագիտության զարգացմանը հասնելու համար պետք է ունենալ հստակ նպատակներ.*

1. Ինտեգրվել համաշխարհային գրադարանային ցանցի աշխատանքներում՝ տեղեկանալով նորություններին, առաջընթաց զարգացումներին, առկա մարտահրավերների հաղթահարման ուղիներին,
2. Նպաստել գրագիտության զարգացմանը՝ օգտագործելով դեպի ընթերցանություն տանող հնարավոր ուղիները,
3. Անմասն չմնալ համացանցային գոեհկաբանության վերացմանն ուղղված աշխատանքներին,
4. Տեղեկացված լինել կլիմայական փոփոխություններին վերաբերող հարցերին, բարձրաձայնել խնդիրները, կարևորել մարդկային գործոնի ազդեցությունը այդ համատեքստում՝ այդ թեմաներով լույս տեսած բրոշյուրների, հոդվածների ընթերցանության խթանման միջոցով, գրքերի քննարկումների, զրույցների, թեմատիկ գրադարակների ստեղծման օգնությամբ,
5. Մասնակից լինել գլոբալ տաքացման հետևանքով առաջացած խնդիրների հաղթահարմանը՝ որպես երկրների մշակութային համագործակցության առաջնահերթություն,
6. Մշակութային ժառանգության պահպանության մեջ ունենալ խնդիրների բարձրաձայնման հնարավորություն,
7. Հաշվի առնելով միջազգային փորձը և հիմք ընդունելով դրանք՝ առկա խնդիրների բարձրաձայնումը, տեղեկացվածության աստիճանի ապահովումը դարձնել առաջնահերթություն,
8. Բնապահպանական մի շարք խնդիրների հաղթահարմանն ուղղված աշխատանքներին ընթերցողների մասնակցության ապահովումը՝ հենց դպրոցական նստարանից սկսած, դարձնել գործելակերպ,
9. Ամեն գնով նպաստել երկրի զարգացման արագ տեմպերին, որի դեպքում կկարողանանք ինքներս հոգավ մեր կարիքները, լուծել առաջացած խնդիրները՝ առանց որևէ մեկի հետ հույս կապելու,
10. Հետևել մարդասիրական վեհ գաղափարների պահպանմանը,
11. Հասնել գրադարանների դերի ու նշանակության, ոլորտային խնդիրների բարձրաձայնման, լուծման ուղիների առաջընթացի հնարավորության,
12. Հետևել գրադարանային ներուժի համախմբմանը, գրադարանների՝ որպես ռեսուրս կենտրոնների ձևավորմանը, նորարար գրադարանների փորձի ուսումնասիրմանն ու տեղայնացմանը

**Խնդիրները.**

1. Փորձել ներգրավվել համաշխարհային գրադարանային ցանցի աշխատանքներին,
2. Հասնել գրագիտության շարունակական զարգացմանը՝ օգտագործելով բոլոր հնարավոր ուղիները,
3. Մեր ներդրումն ունենալ համացանցային գոեհկարանության եթե ոչ վերացման, ապա, գոնե նվազեցման մեջ:
4. Այդ թեմաներով լույս տեսած բրոշյուրների, հոդվածների ընթերցանության խթանման միջոցով, գրքերի քննարկումների, զրույցների, թեմատիկ գրադարակների ստեղծման օգնությամբ նպաստել կլիմայական փոփոխություններին վերաբերող տեղեկությունների իրազեկմանը՝ մասնակից լինելով խնդիրների հաղթահարմանը:
5. Հնարավոր բոլոր միջոցներով՝ ելնելով մեր երկրի ընտրած ռազմավարությունից, նպաստել երկրների մշակութային համագործակցությանը:
6. Մշակութային ժառանգության պահպանությանը մեջ ունենալ սեփական դերը
7. Ծանոթանալ միջազգային փորձին և հիմք ընդունելով դրանք՝ բարձրաձայնել առկա խնդիրները:
8. Հասցնել ընթերցողների գիտակցությանը, որ բնապահպանական խնդիրները բոլորինս են:
9. Հույս չկապել որևէ մեկի հետ և խնդիրների լուծման ուղիներ փնտրել:
10. Մարդասիրական վեհ գաղափարների պահպանումը դարձնել առաջնահերթություն:
11. Նպաստել գրադարանների դերի ու նշանակության բարձրացմանը:
12. Դառնալ գրադարանային համախմբված ներուժի անդամ՝ շարունակական փոխհամագործակցությամբ:

***Կան ընթերցանության խթանման և գրագիտության զարգացման բազմաթիվ ուղիներ.***

1. Թեմատիկ գրադարակների ստեղծում

Աշխատանքն ինքնին հետաքրքիր է, բնականաբար, այս ամենը պետք է արվի ժամանակակից մոտեցումներով: Եթե տարիներ առաջ թեմատիկ գրադարակները ստեղծում էինք ընթերցասարահում կամ գրադարանի մի անկյունում, այժմ դա արվում է նաև վիրտուալ եղանակով: Առաջինի դեպքում գրադարան հաճախողներն էին միայն հաղորդակից լինում տվյալ թեմային, վիրտուալ եղանակի դեպքում մենք նաև հնարավորություն ունենք ավելի շատ ընթերցողների ներգրավել դեպի ընթերցանության հորձանուտ:

2. Գրքի քննարկումների կազմակերպում

Այն ընթերցանության խթանման կարևոր բաղադրիչներից մեկն է, ինչը թույլ է տալիս ծանոթանալու նոր լույս տեսած գրքերի հետ, առավել խորը ուսումնասիրելու ազգային ու համաշխարհային գրականության տիտանների ստեղծագործությունները, վեր հանելու քննարկվող գրականության մեջ առաջ քաշված նոր և արդիական գաղափարները, անդրադառնալու ժամանակակից հիմնախնդիրներին, բարձրաձայնելու դրանք: Գրքի քննարկումների ընթացքում պետք է ոչ միայն կարողանանք շեշտը դնել մարդասիրական գաղափարների տարածմանը, լավ կամ վատ արարքի հանդեպ ապրումակցման անհրաժեշտությանը, միջանձնային հարաբերությունների խելացի կառուցմանը, սպորտի միջազգային նշանակությանը, այլև, օրինակ՝ ինտեգրել սպորտն ու գրադարանը՝ նպաստելով առաջընթաց զարգացման և ընթերցանության անքակտելի կապի բացահայտմանը:

3. Ֆլեշմոբ-վիկտորինաների կազմակերպում տարաբնույթ թեմաներով
4. Առանձին գրքերի վերաբերյալ փոքրիկ՝ մի քանի վայրկյանանոց տեսանյութերի պատրաստում (ուղղորդված ընթերցանության խթանման հրաշալի միջոց է)
5. Անդրադարձ ստեղծագործող երեխաների ստեղծագործություններին՝ ուղղորդում և խրախուսում
6. Գրքերի ցուցահանդեսների կազմակերպում

7. Տարատեսակ տեսանյութերի պատրաստում՝ «Միրենք բնությունը», «Հայրենասիրությունն սկսվում է ծննդավայրից», «Պայքարենք համացանցային գոեհկաբանության դեմ» և այլ շարքերից

8. Կարևոր օրերի վերաբերյալ (հոբելյանների, հոբելյարների, պետական և ազգային տոների ու տոնակատարությունների) միջոցառումների նախապատրաստում և անցկացում:

9. Ճանաչողական այցերի կազմակերպում

10. Համագործակցություն տարբեր գրադարանների միջև (ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ՝ արտերկրում)

11. Գրադարանի գրքային ունեցվածքի համալրում: Ի թիվս համալրման տարաբնույթ ձևերի՝ կարելի է գործածել նաև սեփական նախաձեռնությամբ իրականացվողները, ինչն ունի մի շարք առավելություններ: Օրինակ՝ մեր գրադարանում, ընթերցողների հետ միասին, որոշեցինք ինքներս էլ անմասն չմնալ գրադարանի գրքային ունեցվածքի համալրմանն ուղղված աշխատանքների կազմակերպումից: Արդյունքում՝ բոլորս միասին սկսեցինք դաշտ գնալ, հավաքել դեղաբույսեր, փաթեթավորել, ծնողների օգնությամբ վաճառել և գրքեր գնել՝ գրադարանի գրքային ունեցվածքը համալրելու համար: Այս ձեռնարկի իրագործումից մենք ունեցանք.

ա) Ընթերցողների թվի ավելացում: Ձեռք բերեցինք ոչ միայն նոր գրքեր, այլև ավելացավ ընթերցողների թիվը, քանի որ աշակերտներից շատերն անպայման ուզում էին ընթերցել իրենց ընկերների աշխատանքի արդյունքով ձեռք բերված գրքերը,

բ) Երեխաների միջև ավելի սերտացած փոխհարաբերություններ,

գ) Իրենց աշխատանքի կարևորության գիտակցումով մեծացող երեխաներ (այն խթան կհանդիսանա երեխաների կյանքում հետագա գործունեության ծավալման համար),

դ) Երեխաների միջև առողջ համագործակցության ապահովում,

ե) Դեղաբույսերի գործածության ավելացում (բոլորն էլ գիտեին դեղաբույսերի օգտակարության մասին, սակայն ոչ բոլորն ունեին դաշտ գնալու և դեղաբույս հավաքելու հնարավորություն՝ հատկապես տարեցները, ովքեր իրենց երկարակեցության և առողջ ապրելու գրավականը համարում էին հենց դեղաբույսերի գործածությունը),

զ) Նոր գաղափարների առաջաջում:

Մեր պարագայում՝ քանի որ մեր գյուղը գտնվում է բարձրլեռնային գոտում, երեխաների, դեռահասների, պատանիների համար ժամանցի վայրեր չկան, և ձմեռն էլ շատ երկար է տևում, ընթերցողներիս հետ հաճախ ենք վայելում դաշտից մեր հավաքած դեղաբույսերով՝ դադձով, ուրցով, մասուրով, սրոհունդով, երիցուկով պատրաստված թեյերը և կազմում նոր ծրագրեր

12. Գրադարանային առօրյայի հետաքրքիր կազմակերպում (այստեղ ևս մեծ դեր ունեն նորովի մոտեցումները):

Գրադարանային աշխատանքի հիմնական ուղղվածության հիմքում գերակա ուղղությունների պահպանումը (հայրենասիրական դաստիարակությունը, անդրադարձը համաշխարհային գրական հարուստ ժառանգությանը՝ բանաստեղծների ու արձակագիրների ստեղծագործություններին ու հոբելյաններին, մարդասիրական վեհ գաղափարներին հետամուտ լինելը, գլոբալ մարտահրավերներին արձագանքելը) կնպաստի ոչ միայն աշխատանքների արդյունավետությանը, այլև՝ երկրների զարգացմանն ուղղված քայլերի մշակմանն ու արդիականացմանը, փոխադարձ փորձի փոխանակմանը (կորոնավիրուսային համավարակն ապացուցեց, որ ամբողջ երկրագունդը մի ափի մեջ է և ունի բոլորիս ու յուրաքանչյուրիս հոգածության կարիքը):

Շատ կարևոր է գրադարանային աշխատանքի ընթացքում կարմիր թելով անցկացնել մարդկային այնպիսի որակների դաստիարակումը, ինչպիսիք են ազնվությունն ու արդարությունը, նվիրումն ու հավատարմությունը, համագործակցությունն ու փոխօգնությունը և, ընդհակառակը, վատ վերաբերմունք ձևավորել դավաճանության, ստի, կեղծիքի, նախանձի և այլ

մերժելի երևույթների հանդեպ՝ յուրաքանչյուրիս ցավն ու ուրախությունը բոլորինս դարձնելով, դժվարությունները միասնաբար հաղթահարելով:

Վերոնշյալ գործողությունները համակարգված և արդյունավետ կազմակերպելու համար ավելի է կարևորվում գրադարանային վերապատրաստումների, համագործակցության, փոխօգնության և պատկան մարմինների կողմից վերահսկողության դերը: Այս ամենով հանդերձ՝ մենք շատ անհրաժեշտ ենք համարում միջազգային փորձի ուսումնասիրումը գրադարանների գործունեության, ընթերցանության խթանման ուղղությամբ, կարևորագույն նորությունների մշակումը և տեղայնացումը մեր երկրում, ինչը նորովի մոտեցումների հնարավորություն կտա մի շարք ոլորտներում: Այժմ վիրտուալ հնարավորությունները շատ մեծ են և մենք չպետք է բաց թողնենք դրանցից ոչ մեկը՝ զարգացնելու մեր երկիրը, ուշադրություն դարձնելու ամեն մի աննշան թվացող բնագավառի. մեր զինվորն իր կյանքը չի խնայել ու չի խնայում հայրենիքի պաշտպանության գործում:

Հայ գրքի տպագրության 510-ամյակին նվիրված՝ «Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» գիտաժողովի անցկացումը ցույց տվեց, որ մեզ համար կարևոր է փոխադարձ համագործակցության հնարավորությունների ստեղծումը ոչ միայն մեր հանրապետությունում գործող գրադարանների, այլև արտերկրյա գրադարանների միջև: Իսկ գրադարանային համագործակցության ուղիների մշակումը, փոխադարձ այցելությունների կազմակերպումը, ծանոթացումը միջազգային փորձին՝ գրադարանային ոլորտում, շփումը գործընկերների հետ միայն խթան կհանդիսանա գրադարանային ոլորտի զարգացումն ապահովելու համար: Դա կարևոր է երկուստեք՝ գիտության տարբեր ճյուղերի ուղղությամբ առաջընթաց քայլերի ապահովման համար: Համագործակցության միջոցով, օրինակ՝ աստղաֆիզիկայի, բնապահպանության, կլիմայական փոփոխությունների, ռազմաարդյունաբերության, գյուղատնտեսության, զբոսաշրջության և այլ բնագավառներում, մենք կհասնենք ցանկալի և ողջունելի արդյունքի: Տեղին է հիշատակել հայությանն ուղղված՝ իրենց ապագան կառուցելու համախմբման կոչի պատգամը. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» [Չարենց, 1968, 427] ակրոստիքոսի ձևով, երկրորդ տառերի հաջորդականությամբ գրել է հայ ժողովրդի մեծագույն բանաստեղծներից մեկը՝ Եղիշե Չարենցը իր «Պատգամ» բանաստեղծության մեջ՝ խորհրդային իշխանություններից թաքցնելով իր պատգամը, որն էլ հանդիսացավ նրան մահվան դատապարտելու պատճառներից մեկը:

Այսօր մեզ հարկավոր է չարենցյան պատգամը՝ գլոբալ իմաստով (գոյատևման, պայքարելու, համագործակցելու, զարգանալու, բարգավաճելու...) և ուղղված ոչ միայն հայ ժողովրդին. Ո՛վ ժողովուրդներ, մեր միակ փրկությունը մեր հավաքական ուժի մեջ է, քանի որ կան բազմաթիվ մարտահրավերներ, գլոբալ խնդիրներ, ահաբեկչության կազմակերպիչներ և հովանավորներ, որոնց դեմ պայքարելը միայնակ դժվար է՝ ցանկացած (զարգացած և ոչ զարգացած, ժողովրդավար և ոչ այնքան ժողովրդավար) պետությունների, ժողովուրդների ու ազգերի համար:

Նոր տեխնոլոգիաների կիրառությունները, 21-րդ դարի թռիչքային զարգացումները, արհեստական ինտելեկտի գոյությունը մեր՝ գրադարանային ոլորտի համար ունենալու են և՛ դրական, և՛ բացասական ազդեցություններ: Եվ պետք է քրտնաջան ու հետևողական աշխատանք տանել ետ չմնալու առաջընթաց զարգացումից՝ մինևս ժամանակ օգտագործելով մեր ավանդական ու արդյունավետ մեթոդներն ու հնարները՝ հասնելու ցանկալի արդյունքի:

Համատեղելով մեր և արտերկրյա մեր գործընկերների կարողություններն ու հմտությունները, ի մի բերելով անցյալի փորձը, նոր ուղիների փնտրտուքը դարձնելով առաջնահերթություն, հետամուտ լինելով մեր ձգտումների ու նպատակների իրականացմանը, նպաստելով հնարավորինս շատ գրադարանների միջև համագործակցության հաստատմանը՝ կարող ենք գրադարանային վերը նախանշված բազմաթիվ ուղղությունները հասցնել նոր հանգրվանի: Ամեն դեպքում՝ համախմբումը, նվիրումը, աշխատասիրությունը, պրպտելու, նորն ու առաջավորը փնտրելու ջիղի, բավարար կամքի առկայությունը մեզ համար այլընտ-

րանք չունի՝ կողմնակի ոչ ադեկվատ կարծիքներին դիմագրավելու և հակառակում համոզելու կարողունակության, տարաձայնությունների, տեխնիկական խնդիրների հաղթահարման համատեքստում:

### **SUMMARY**

By combining the abilities and skills of ours and our partners abroad, bringing together the past experience, making the search for new ways a priority, pursuing the realization of our aspirations and goals, promoting the establishment of cooperation among as many libraries as possible, we can bring a number of library directions outlined above to a new milestone. In any case, consolidation, dedication, hard work, the vein to strive, to search for new and advanced, sufficient will has no alternative for us, in the context of overcoming disagreements and technical problems, the ability to face inadequate external opinions and convince otherwise.

### **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Չարենց Ե., Երկերի ժողովածու 6 հատորով, հատոր 4, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1968, 626 էջ: